6773

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարար

Հակոբ Սիմիդյան

«13» 06 2025 թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 173 - 25

Նախաձեռնող՝ **«ՕՐԻԵՆԹ ՍԹՈՆ» ՍՊԸ**
Երևան, Շիրակի փ., 92/1

Գործունեությունը՝ **Արարատի տրավերտինների և կավերի հանքավայրի «Մ.Գ.Սթոուն» տեղամասում օգտակար հանածոյի արդյունահանում**
Արարատի մարզ

Առդիր՝ 4 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 173 - 25

«13» հունիսի 2025 թ.

«Օրիենթ Սթոն» ՍՊԸ-ի կողմից Արարատի մարզի Արարատի տրավերտինների և կավերի հանքավայրի «Մ.Գ.Սթոուն» տեղամասի օգտակար հանածոյի արդյունահանման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Նախաձեռնող՝	«Օրիենթ Սթոն» ՍՊԸ
Փաստաթղթերի փաթեթ՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն, նախագծային փաստաթղթեր
Գործունեության տեսակ՝	«Ա» կատեգորիա
Գտնվելու վայրը՝	Արարատի մարզ, Արարատ համայնք, Ավշար բնակավայր

Ներածական մաս. «Օրիենթ Սթոն» ՍՊԸ-ի կողմից նախատեսվում է Արարատի մարզի Արարատի տրավերտինների և կավերի հանքավայրի «Մ.Գ.Սթոուն» տեղամասում (այսուհետ՝ տեղամաս) իրականացնել օգտակար հանածոյի արդյունահանում: Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 12-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի «թ» ենթակետի՝ նախատեսվող գործունեությունը «Ա» կատեգորիայի գործունեության տեսակ է:

Նկարագրական մաս. Արարատի տրավերտինների և կավերի հանքավայրի «Մ.Գ. Սթոուն» տեղամասը գտնվում է Արարատի մարզի Արարատ համայնքի Ավշար բնակավայրում և տեղակայված է Վանաշեն գյուղի բնակելի շինություններից՝ 1,4 կմ, Վեդի քաղաքի շինություններից՝ 2,6 կմ, Գոռավան բնակավայրի շինություններից՝ 2,9 կմ և Այգավան բնակավայրի շինություններից՝ 2,4 կմ հեռավորությունների վրա: Ավշար բնակավայրը գտնվում է հայցվող տարածքից մոտ 3,1 կմ հեռավորության վրա: Հանքավայրը Արարատ և Վեդի քաղաքների, Գոռավան և Վանաշեն գյուղերի հետ կապված է գրունտային և ասֆալտապատ ճանապարհներով, իսկ բուն բնակավայր Երևանի հետ՝ ավտոմայրուղիով և երկաթուղով (մոտ 53կմ): Տեղամասից մոտ 0,9 կմ

հեռավորության վրա գտնվում են Վեդի-Գոռավան-Արարատ-Հ8 տեղական նշանակության, մոտ 1,7 կմ հեռավորության վրա՝ Տ-2-48 և 2,2 կմ հեռավորության վրա՝ Հ-10 հանրապետական նշանակության ավտոճանապարհները:

Բացահանքի կոորդինատները ARM WGS-84 համակարգով ներկայացված են ստորև՝

	X	Y
1	4416919.0467	8474532.6771
2	4416909.6500	8474672.1100
3	4416655.0300	8474657.7600
4	4416650.8200	8474586.7300
5	4416646.2990	8474568.4676

Տեղամասի կենտրոնի աշխարհագրական կոորդինատներն են՝ 39°53'2.91" հյուսիսային լայնության, 44° 42'12.69" արևելյան երկայնության:

Բացահանքի վերջնական եզրագծի պարամետրերն են՝

- առավելագույն երկարությունը՝ 275,0 մ,
- առավելագույն լայնությունը – 140,0 մ,
- մշակվող տրավերտինների հաստաշերտի միջին հզորությունը – 17,125 մ,
- բացահանքի առավելագույն խորությունը՝ 55 մ,
- բացահանքի օտարման մակերեսը՝ 3,0 հա,
- տրավերտինների հաշվեկշռային պաշարները՝ 514240 մ^3,
- տրավերտինների կորզվող պաշարները՝ 437104 մ^3,
- ցեմենտի հումքի հաշվեկշռային պաշարները՝ 213760 մ^3,
- ցեմենտի հումքի կորզվող պաշարները՝ 181696 մ^3:

Արդյունահանումը նախատեսվում է իրականացնել ընդլայնական ընթացաշերտով, միակող մշակման համակարգով:

Նախատեսվող գործունեության ՇՄԱԳ հաշվետվությունը կազմվել է «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի պահանջներին համապատասխան: Հաշվետվությունում նախատեսվել են շրջակա միջավայրի վրա ազդեցությունները մեղմացնող մի շարք բնապահպանական միջոցառումներ, որոնք ներառվել են բնապահպանական կառավարման պլանում:

Պատճառաբանական մաս. Նախատեսվող գործունեության փորձաքննությունն իրականացվել է «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի պահանջներին համապատասխան:

Փորձաքննական գործընթացում հաշվետվության վերաբերյալ «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքով սահմանված կարգով պետական կառավարման մարմիններից, տեղական ինքնակառավարման մարմիններից և շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումներից ստացվել են կարծիքներ, դիտողություններ և առաջարկություններ: Ստացված կարծիքներն ամփոփվել են, ներկայացվել են մի շարք դիտողություններ և հաշվետվությունն ուղարկվել է լրամշակման:

Պետական փորձաքննական եզրակացությունը կազմվել է հիմք ընդունելով հետևյալ փորձաքննական հիմնավորումները՝

1. Թախտաջյանի անվան բուսաբանության ինստիտուտի կարծիքի համաձայն՝ տարածքում հանդիպում են Salsola tamamschjanae, Rhinopetalum gibbosum, Iris elegantissima և Crambe armena ՀՀ բույսերի Կարմիր գրքում գրանցված տեսակները: Crambe armena բուսատեսակը ընդգրկված է նաև Բնության պահպանության միջազգային կարմիր ցուցակում: Ընկերությանը առաջարկվել է իրականացնել լրացուցիչ ուսումնասիրություններ նշված բուսատեսակների առկայությունը հայցվող տարածքում հերքելու նպատակով, սակայն ներկայացված եզրակացությունում, որը տրվել է «Բիոգամա» ընկերության մասնագետի կողմից, ևս նշվել է, որ հետազոտություններ իրականացնելու և ճշգրիտ տվյալներ ստանալու համար անհրաժեշտ է հաշվի առնել բույսերի վեգետացիոն շրջանների առանձնահատկությունները և հետազոտություններն իրականացնել վեգետացիայի ողջ շրջանում: Ընդերքի մասին օրենսգրքի 26-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն՝ ընդերքի առանձին տեղամասերի օգտագործումն արգելվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով՝ շրջակա միջավայրի պահպանության տեսանկյունից, եթե հայցվող ընդերքի տեղամասի վրա գտնվող հողամասում կան Հայաստանի Հանրապետության կարմիր գրքում գրանցված բույսեր:

2. Համաձայն շրջակա միջավայրի նախարարության ԲՀՊՏ վարչության կողմից ներկայացված կարծիքի՝ ըստ քարտեզագրական նյութերի հայցվող տարածում և հարակից տարածքներում հանդիպում են ՀՀ կենդանիների Կարմիր գրքում գրանցված՝ Արաքսյան չրխկան, Միջերկրածովյան կրիա և Սեմյոնովի սևամարմին տեսակները: Կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոնի կողմից նախատեսվող գործունեության վերաբերյալ ներկայացվել է բացասական դիրքորոշում՝ հիմք ընդունելով այն հանգամանքը, որ հաշվետվությունում անողնաշարավոր կենդանիների վերաբերյալ տվյալները խիստ թերի են՝ բացակայում են անողնաշարավոր կենդանիների տեսակային բազմազանության վերաբերյալ տվյալները: Հայցվող տարածքում Արաքսյան չրխկան (Cardiophorus araxicola) Սեմյոնովի սևամարմին (Cyphostethe semenovi) տեսակների կայուն պոպուլյացիաների հնարավոր առկայության կամ բացակայության վերաբերյալ կարելի է դատել միայն տարածքում համապատասխան հետազոտություններ իրականացնելուց հետո: Լրամշակված հաշվետվությունը ևս ուղարկվել է կարծիքի Կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոնին, որին ի պատասխան նշվել է, որ դիտողությունները չեն լրամշակվել:

3. Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 17-րդ հոդվածի 14-րդ կետի՝ պետական փորձաքննական եզրակացությունը կազմվում է՝ հիմք ընդունելով հաշվետվությունների ամբողջականությունը և համապատասխանությունը նախագծային փաստաթղթին: Նախագծում և հաշվետվությունում մակաբացման ապարների վերաբերյալ ներկայացված են հակասական տեղեկություններ՝ հաշվետվությունում նշվել է, որ մակաբացման ապարները բացակայում են, սակայն նախագծում նշվել է, որ մակաբացման ապարները բացահանքում կազմում են 64411 մ^3:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

Հիմք ընդունելով «Ընդերքի մասին օրենսգրքի 26-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը և հաշվի առնելով վերը նշված հիմնավորումները՝ Արարատի մարզի Արարատի տրավերտինների և կավերի հանքավայրի «Մ.Գ.Սթոուն» տեղամասի օգտակար հանածոյի արդյունահանման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությանը տրվում է բացասական եզրակացություն:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար՝ Սևակ Մարկոսյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի տեղակալ՝ Հերիքնազ Մկրտչյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխավոր մասնագետ՝ Քրիստինե Հարությունյան